

# Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 13.10.2021թ. չորեքշաբթի թիվ 42 (1015)

Ուսուցչի օրվա առթիվ

ԱՊՀ

## Ավանդական հանդիսություն

## Համագործակցության խորհրդի 34-րդ նիստը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն Ուսուցչի օրվա առթիվ «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցած հանդիսավոր միջոցառման ժամանակ պարգևներ է հանձնել հանրակրթական դպրոցների եւ նախնական արհեստագործական ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մի խումբ մանկավարժների:



Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը, նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը, դպրոցների, ուսումնարանների եւ քոլեջների մանկավարժներ, կրթության բնագավառի այլ աշխատողներ:

ԿԳՄՍ նախարարության մեդալներ են հանձնվել Արմավիրի մարզի «Սարգսյան պատի միջնակարգ դպրոցին», «Երեւանի թիվ 78 հիմնական դպրոցին», «Երեւանի Թաթուլ Կրպեյանի անվան թիվ 62 ավագ դպրոցին», «Երեւանի Լեւոն Արիսյանի անվան թիվ 127 ավագ դպրոցին», «Երեւանի թիվ 150 հիմնական դպրոցին», «Երեւանի ինֆորմատիկայի պետական քոլեջին», Արարատի մարզի «Վեդու թիվ 1 հիմնական դպրոցին» եւ Արցախի ճարտարի Արա Ավանեսյանի անվան դպրոցին, որոնք պարգևատրվել են ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 5-ի հրամանով: Նշված դպրոցները ԿԳՄՍ մեդալի են արժանացել Արցախի հերոսներ՝ Դավիթ Գրիգորյանի, Էդգար Մարկոսյանի, Յուրա Ալավերդյանի, Դավիթ Ղազարյանի (հետմահու) եւ Սերգեյ Շաբարյանի մեծ քաղաքացիական բարձր պատասխանատվություն եւ հայրենասիրություն սերմանելու եւ հանուն հայրենիքի անձնագործության որակներ եւ արժեքային համակարգ ձեւավորելու համար: 2020 թվականի պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ այդ պարգևները հանձնվել են այս տարի:

հաղթած ուսուցիչների անունները՝ ըստ անվանակարգերի:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից իրականացված «Տարվա լավագույնները» մրցույթին ներկայացվել է 202 հայտ (հայտերը համապատասխանել են կարգով սահմանված բոլոր պահանջներին), որից 141-ը եղել են անհատական, իսկ 61-ը՝ խմբային:

Մրցույթն անցկացվել է 6 անվանակարգերում, որոնք սահմանված են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 7-ի 37-Ն հրամանով հաստատված «Տարվա լավագույնները» մրցույթի կարգով:

«Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում ներկայացվել է 146, «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 16, «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնառության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 26, «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 9, «Նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնառության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 5 ծրագիր: «Նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում որեւէ ծրագիր չի ներկայացվել:

Ազդարարվել են նաեւ «Տարվա լավագույնները» մրցույթում

ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի նախագահությունը 2021 թվականին ստանձնել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը: Այդ նպատակով երեւանում տեղի է ունեցել ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի 34-րդ նիստը:


Հանդիպմանը մասնակցել են խորհրդի անդամներ եւ ԱՊՀ անդամ երկրների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ղազախստանի Հանրապետության, Տաջիկստանի Հանրապետության եւ Ղրղզստանի Հանրապետության ներկայացուցիչներ: Նիստի որոշ մասնակիցներ հանդիպմանը միացել են տեսակապի միջոցով: Նիստը վարել է ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի նախագահ, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը: «Ողջունում եմ ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի 34-րդ նիստի մասնակիցներին: Մենք շատ ուրախ ենք տեսնել բոլորիդ Հայաստանում: Կստահ եմ, որ հանդիպումը կանցնի կառուցողական դաշտում, կնպաստի մեր գերատեսչությունների միջեւ համագործակցության հետագա խորացմանը եւ ամրապնդմանը», - նշել է նախարարի տեղակալը:

Հանդիպման օրակարգում ներառված էր շուրջ 20 հարց:

Հարունակությունը՝ էջ 2

## Արտաշես ԲԱԼԱՆԹԱՐՅԱՆ-90

### Լրագրողական լավագույն աշխատանքի մրցույթ



Մեծանուն արձակագիր, դրամատուրգ, լրագրող Արտաշես Բալանթարյանի ծննդյան 90 ամյակի կապակցությամբ Բալանթարյան ընտանիքը, Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համատեղ, «Կրթություն» շաբաթաթերթի մասնակցությամբ, կազմակերպել էր «Լրագրողական լավագույն աշխատանքի» մրցույթ՝ երեք անվանակարգերով. «Բաց նամակ Ջավեն Շարաֆյանին (Արտաշես Բալանթարյանի գրական հերոսն է)», «Արտագաղթի եւ հայրենադարձության թեման Արտաշես Բալանթարյանի ստեղծագործություններում», «Արտաշես Բալանթարյանը՝ լրագրող»:

Հարունակությունը՝ էջ 6

## Սրբոց Թարգմանչաց

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Սրբոց Թարգմանչաց տոնը նշում է հոկտեմբեր ամսվա երկրորդ շաբաթ օրը. այս տարի այն նշվեց հոկտեմբերի 9-ին: Սուրբ Թարգմանիչներ Մեսրոպ Մաշտոցի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու եւ Ներսես Շնորհալու տոնը վաղուց ձեռք է բերել համազգային նշանակություն՝ խորհրդանշելով ազգային զարթոնք, ազգերի միջեւ մշակութային փոխգործակցություն, համամարդկային բանական գլուխգործոցների արժեւորում:

տե՛ս՝ նաեւ էջ 8-9

Հարունակությունը՝ էջ 3

Մայր Աթոռ

Վեհափառ Վատիկանում հանդիպեց Ֆրանցիսկոս Պապի հետ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վատիկանում հանդիպում ունեցավ Հռոմի Արքայապետ Ֆրանցիսկոս Պապի հետ: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ 44-օրյա պատերազմի աղետալի հետևանքներին, Հայաստանի եւ Արցախի առջև ծառայած ներկայիս մարտահրավերներին, հատկապես շեշտադրելով ռազմագերիների եւ հետպատերազմյան շրջանում գերության մեջ հայտնվածների վերադարձի խնդիրը: Նորին Արքեպիսկոպոսը նաեւ շնորհակալություն հայտնեց Արքայապետ Ֆրանցիսկոսին պատերազմի ընթացքում հայ ժողովրդին եւ Հայաստանին ցուցաբերած աջակցության համար: Հանդիպման ավարտին Հռոմի Ֆրանցիսկոս Պապի հետ զրույցը բաշխեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակության անդամներին:



Այնուհետեւ Հայոց Հայրապետի գլխավորած պատվիրակությունը հանդիպում ունեցավ նաեւ Վատիկանի պետքարտուղար, կարդինալ Պետրո Պարոլինի հետ: Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց արցախյան 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված իրավիճակին: Արժանատի է նշել, որ Արցախի ժողովրդի անվտանգությանը, Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ ոտնձգություններին, ինչպես նաեւ Արցախի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության պահպանմանը վերաբերող հարցեր:

Համագործակցության խորհրդի 34-րդ նիստը

սկիզբ էլ 1

ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի 2020 թ. հոկտեմբերի 21-ի նիստի որոշումների կատարման մասին զեկուցել է խորհրդի քարտուղարության ղեկավար, ՀՀ ԿԳՄՍՆ արտաքին կապերի եւ սփյուռքի վարչության պետ Արկադի Պապոյանը:

Նիստի ընթացքում քննարկվել են հունանիտար եւ սոցիալ-տնտեսական, ինչպես նաեւ մասնագիտական կրթության ոլորտներում կադրերի պատրաստման եւ վերապատրաստման ուղղություններով ԱՊՀ անդամ պետությունների բազային կազմակերպությունների գործունեության եւ զարգացման հեռանկարները: Խորհուրդը դրական է գնահատել բազային կազմակերպությունների գործունեությունը եւ առաջարկել է աջակցել վերոնշյալ ոլորտներում ուսանողական օլիմպիադաների ու մրցույթների, կրթական ծրագրերի խթանման նպատակով միջոցառումների անցկացմանը, ԱՊՀ տարածքում ուսանողների եւ գիտամանկավարժական աշխատողների փոխանակմանը, ինչպես նաեւ ԱՊՀ անդամ երկրների համալսարանների միջեւ համագործակցության ընդլայնմանը: Քննարկվել է նաեւ ԱՊՀ անդամ պետությունների բազային կազմակերպության ստեղծման հարցը՝ բարձր որակավորում ունեցող լրագրողների պատրաստման եւ վերապատրաստման նպատակով:

Հաջորդ հարցերը վերաբերել են ԱՊՀ տարածքում բարձրագույն կրթության որակի ապահովման առումով միասնական չափանիշների մշակման առաջարկին, ինչպես նաեւ մանկավարժական վարպետության միջազգային փառատոնի անցկացմանը: Անդրադարձ է եղել նաեւ կրթության ոլորտում ԱՊՀ պետությունների համագործակցության տնտեսական զարգացման ռազմավարության երրորդ փուլի (2016-2020թթ.) արդյունքներին,



ԱՊՀ համագործակցության հետազոտարկային կենտրոնները հաղթահարելու նպատակով կրթության ոլորտում ԱՊՀ անդամ երկրների փոխգործակցության եւ ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների ու մանկավարժների VII համագումարի վերաբերյալ հարցեր:

Քննարկվել են նաեւ COVID-19 համավարակի հետևանքները հաղթահարելու նպատակով կրթության ոլորտում ԱՊՀ անդամ երկրների փոխգործակցության եւ ԱՊՀ մասնակից պետությունների ուսուցիչների ու մանկավարժների VII համագումարի վերաբերյալ հարցեր: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը լրագրողների հետ զրույցում նշել է, որ «Անկախ պետությունների համագործակցության ցանցային համալսարանի հիմնադրման եւ գործունեության մասին» համաձայնագիրը շուտով կնքվի Արցախի Ազգային ժողով վավերացման, որն էլ իր հերթին ավելի լայն հնարավորություններ կընձեռի ԱՊՀ տարածքում ուսանողների եւ դասախոսների փոխանակման տեսանկյունից: «Ուրախությամբ պետք է նշեմ, որ Հայաստանն այսօր հյուրընկալել է ԱՊՀ երկրների մեր գործընկերներին, որը կազմակերպվել է բարձր մակարդակին, ինչպես նաեւ մանկավարժական վարպետության միջազգային փառատոնի անցկացմանը»:

րափակիչ փուլը: Այս ամենով մենք նոր շունչ ենք հաղորդում ԱՊՀ տարածքում ԿԳՄՍ ոլորտներում համագործակցությանը»,- շեշտել է նախարար տեղակալը:

ԱՊՀ գործադիր կոմիտեի հունանիտար համագործակցության, քաղաքական եւ սոցիալական հիմնախնդիրների վարչության խորհրդական Գալինա Կազակև իր գոհունակությունն է հայտնել նիստի՝ բարձր մակարդակով անցկացման վերաբերյալ:

«Անցյալ տարի որոշում կայացվեց, որ ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի նախագահությունը 2021 թվականին ստանձնում է Հայաստանը: Նշեմ, որ այս տարին բավականին արդյունավետ էր թուր ուղղություններով արձանագրվել է առաջընթաց, եւ բազմաթիվ աշխատանքներ են կատարվել: Այսօրվա նիստի ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, եւ դրվել են կոնկրետ խնդիրներ՝ կրթության ոլորտում ԱՊՀ համագործակցությունն էլ ավելի ամրապնդելու նպատակով: Քննարկվել են նաեւ, թե ինչպես են իրագործվում ԱՊՀ ղեկավար մարմինների որոշումները եւ նախանշել հետագա համագործակցության ուղիները»,- նշել է Գալինա Կազակևը՝ հավելելով, որ նիստի ընթացքում պետք է որոշում կայացվի ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի նախագահությունը 2022 թվականին այլ երկրի փոխանցելու հարցով:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍԱՆ

Հրամանագրման համար առաջին կուրսեցիները պետք է վճարում կատարեն

2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ծրագրով մեկ կիսամյակի ուսման վարձի ամբողջական փոխհատուցում են ստացել շուրջ 7000 ուսանողներ: Նրանցից շուրջ 4000-ը մարտական գործողությունների մասնակից ուսանողներ են, մնացածը՝ պատերազմի մասնակիցների ուսանող զավակներ, կին կամ ամուսին: Ծրագիրը շարունակական է, եւ ուսումնական տարվա մեկնարկին զուգընթաց սկսվել է այն ուսանողների տվյալների հավաքագրումը, որոնք մարտական գործողությունների մասնակից են, գործընկեր են անձանը եւ այժմ պետք է վերականգնեն իրենց ուսանողական իրավունքները: Մարտական գործողությունների մասնակից մոտ 1200 ուսանողներ, որոնք ժամանակին հրամանագրվել են բուհի հետ պայմանագիր են կնքել, սեպտեմբերից վերականգնել են ուսանողական իրավունքները եւ կարող են դառնալ ուսման վարձի փոխհատուցման ծրագրի շահառու՝ մարտական գործողությունների մասնակցությունը հավաստող փաստաթղթերը ներկայացնելով համապատասխան բուհ: Նրանք էլ, որոնք բանակ զորակոչվելուց առաջ ընդունվել են բուհ կամ նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, սակայն չեն հրամանագրվել (կցագրված ուսանողներ), ծրագրի շահառու դառնալու համար նախ պետք է հրամանագրվեն համապատասխան բուհի կամ ՄԿՈՒ հաստատության կողմից: ԿԳՄՍ նախարարության հավաքագրած նախնական տվյալներով կցագրված, այսինքն՝ մինչեւ բանակ զորակոչվելը ընդունված, սակայն չհրամանագրված առաջին կուրսեցիների թիվը շուրջ 150 է: ԿԳՄՍ նախարարությունը վերջին օրերին ստանում է բազմաթիվ զանգեր, որ բուհերը հրամանագրելու համար առաջին կուրսերի բոլոր ուսանողներից, այդ թվում՝ նաեւ մարտական գործողությունների մասնակիցներից, պահանջում են վճարել ուսման վարձը: ԿԳՄՍ նախարարության բարձրագույն եւ հետբուհական կրթության վարչության պետի տեղակալ Լուսինե Գրիգորյանը, պարզաբանելով խնդիրը, նշում է, որ հրամանագրվելու եւ ուսանողի կարգավիճակ ստանալու համար անհրաժեշտ է ուսման վարձի որոշակի մասը վճարել: «Բուհերը, հաշվի առնելով օրենքի պահանջը, բոլոր առաջին կուրսեցիներից կարող են ուսման վարձի վճարումներ պահանջել, ինչը եւ արվել է: Այն գումարը, որն այժմ նրանք կվճարեն, փոխհատուցման ծրագրի շահառու դառնալուց հետո կդիմարվի նրանց երկրորդ կիսամյակի վարձավճար»,- նշում է Լուսինե Գրիգորյանը: Վարչության պետի տեղակալը վստահեցնում է, որ առաջին կուրսեցիները հրամանագրվելու համար կարող են վճարել մեկ ամսվա գումար (մեկ կիսամյակի վարձը բաժանած տվյալ կիսամյակի ամիսների վրա): Կա նաեւ հետվերադարձի մեխանիզմ՝ այն դեպքում, երբ ուսանողը հետագայում չի շարունակել ուսումնառությունը կամ կստանա անվճար կրթության իրավունք որեւէ այլ հիմքով: Պետությունը մարտական գործողությունների մասնակից ուսանողների մեկ կիսամյակի ուսման վարձն ամբողջությամբ փոխհատուցելու պարտավորություն է ստանձնել, որն իրականացվելու է լիովին: Ուսումնառության հետագա ընթացքում եւս մարտական գործողությունների մասնակիցների համար ուսման վարձի արտոնություններ են նախատեսված, ինչն ամրագրված է «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում 2021 թվականի ամռանը կատարված փոփոխությամբ: Կախված առաջադիմությունից՝ ըստ միջին որակական գնահատականի (ՄՈԳ) միավորի, նրանք կարող են ստանալ 50-70 տոկոս զեղչ: ՄՈԳ-ի միավորների բարձրացմանը զուգահեռ՝ զեղչի տոկոսները կավելանան: Համապատասխան կարգը այժմ հաստատման փուլում է, ընդունվելուց հետո այն տարածվելու է 2021 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա: Մեկ կիսամյակի ուսման վարձի ամբողջական փոխհատուցման ծրագիրը կշարունակվի նաեւ 2022 թվականին:

# Ավանդական հանդիսություն

Բուհ

սկիզբը՝ էջ 1

Ներկայացված ծրագրային առաջարկների գնահատման արդյունքում հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել նվազագույն 50 միավոր ստացած 29 ծրագրային առաջարկ, որից 13-ը՝ անհատական, իսկ 16-ը՝ խմբային: Հաղթող ճանաչված ծրագրերի հեղինակներն արժանացել են դրամական պարգևների եւ ԿԳՄՍՆ շնորհակալագրերի՝ ընդհանուր առմամբ 45 մասնակից:

Մասնավորապես՝ «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում հաղթել է 21, «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 3, «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնասօժանակ գործունեության լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 3, «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 1, «Նախադպրոցական ուսումնական հաստատության



տության մանկավարժական լավագույն ծրագիր կամ նախաձեռնություն» անվանակարգում՝ 1, «Նախադպրոցական ուսումնական հաստատության

տության մանկավարժական լավագույն ծրագիր» անվանակարգում՝ 1 ծրագրային առաջարկ:

«Տարվա լավագույնները» մրցույթն անցկացվում է տարեկան մեկ անգամ, որին կարող են մասնակցել հանրակրթական եւ նախադպրոցական հաստատությունների ուսուցիչները, դաստիարակները եւ տնօրենները:

Մրցույթի մասնակիցը պետք է ունենա առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ, ներկայացրած ծրագրերը պետք է ներառված չլինեն նախորդ տարիներին անցկացված մրցույթի արդյունքում պարգևատրված ծրագրերի ցանկում:

Մրցույթին կարող է ներկայացվել ինչպես անհատական ծրագիր առանձին մասնակցի կողմից, այնպես էլ համատեղ ծրագիր՝ առավելագույնը 3 անդամներից բաղկացած խմբի կողմից:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ



## Արցախ

### Իմ ուսուցիչ...

Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում նշվել է ուսուցչի մասնագիտական տոնը: Միջոցառումն սկսվել է մեկ րոպե լռությամբ՝ ի հարգանս 44-օրյա պատերազմի նահատակների հիշատակի:

Ներկաներին ուղղված ողջույնի խոսքում ԱԶ ԿՄՍ նախարար **Լուսինե Ղարախանյանը** նշել է, որ հայրենիքին պատուհասած ծանր պայմաններում մեզմիջ յուրաքանչյուրը յուրովի է արժեւորում ուսուցչի տոնի խորհուրդը: Այդ անանց գնահատանքում բզկտված բնօրանների այրող կարտոն է, զոհյալների հիշատակի խնկարկունը:

«Մեր ուսուցիչներն իրենց առաքելությանը հավատարիմ շարունակում են լինել առաջնորդներ՝ հաղթահարելու համակարգի առաջ ծագած խնդիրները՝ հա-

նուն Արցախի ապագայի: Այժմ միայն ֆիզիկապես են մեզմիջ բացակա իրենց կյանքը հայրենիքին նվիրաբերած ուսուցիչները, գիղեկներն ու տնօրենները, ուսանողները: Խոնարհվում եմ նրանց բոլորի հիշատակի առջև», - ասել է նախարարը:

ԱԶ պետնախարար **Արտակ Բեգլարյանը** շնորհավորել է շնորհակալություն է հայտնել բոլոր մանկավարժներին՝ դժվարին, բայց ազգօգուտ աշխատանքի համար: «Հատկապես պատերազմից հետո մենք համապատասխան վերլուծություններով փորձում ենք նոր շտկումներ իրականացնել կրթակն համակարգում եւ մանկավարժների հետ միասին առաջ գնալ: Առաջընթացում ամենակարեւոր դերը ուսուցչինն է, քանզի կրթության առանցքը նրանով է

ամբողջանում», - նշել է Ա. Բեգլարյանը: Նախարարը պետական բարձր պարգևներ է հանձնել մի խումբ մանկավարժների:

Մասնագիտական տոնի առթիվ մանկավարժներին շնորհավորել է նաեւ ռուսական խաղաղապահ զորակազմի ներկայացուցիչ **Սերգեյ Զադորոժնին**. «Փառք այս հողին, նրա ուսուցիչներին, որ անտեսելով դժվարությունները՝ նվիրվածությամբ իրականացնում են ամենակարեւոր գործը՝ մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը»:

Միջոցառումն ավարտվել է համերգային ծրագրով:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ  
Ք. Ստեփանակերտ,  
մեր սեփական թղթակից



Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախադպրոցական

Համագործակցություն

Հաստատվել է ընդունելության կարգը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով սահմանվել է նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը, որով կարգավորվում են նախադպրոցական տարիքի երեխայի՝ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները...

Երեխայի ընդունելություն

Երեխայի ընդունելությունը հաստատություն իրականացվում է ծնողի կամ երեխայի օրինական ներկայացուցչի դիմումի, հաստատության ու ծնողի միջեւ կնքված պայմանագրի հիման վրա: Երեխայի ընդունելությունը հաստատություն իրականացվում է «Նախադպրոցական կրթության մասին» օրենքով սահմանված տարիքային խմբին համապատասխան: Երեխային հաստատություն ընդունելու օրվան հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում երեխայի տվյալները հաստատության տնօրենը կամ նրա կողմից լիազորված աշխատակիցը մուտքագրում է ԿԳՄՍՆ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից վարվող «Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգ» վարչական ռեգիստր:

Ազգային փոքրամասնությանը պատկանող երեխայի ընդունելությունը հաստատություն կարող է կատարվել երեխայի մայրենի լեզվով ուսուցման կամ այդ լեզվի դասընթաց ունեցող հաստատությունում, իսկ դրա բացակայության դեպքում՝ ուսուցման լեզվի ընտրությունը կարող է կատարել ծնողը: Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի կամ երկրազուգու կամ այն դեպքում, երբ ծնողներից մեկն է օտարերկրյա քաղաքացի, երեխայի ուսուցման լեզվի ընտրությունը կարող է կատարել ծնողը՝ հաստատությունում օտար լեզվով ուսուցման առկայության դեպքում:

Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում. ընդունելությունն իրականացվում է յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ ոչ պետական ուսումնական հաստատությունների: Երեխայի ընդգրկումը հաստատություն կատարվում է հերթագրման միջոցով՝ տեղական ինքնակառավարման մարմնի (հիմնադրի) կողմից վարվող էլեկտրոնային համակարգով, իսկ համակարգի բացակայության դեպքում՝ թղթային տարբերակով:

Ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն կամ երեք եւ ավելի երեխա ունեցող կամ զինծառայող ծնողի երեխաներին, կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին, տվյալ հաստատությունում ընդգրկված քույր, եղբայր ունեցող, ինչպես նաեւ տվյալ հաստատության աշխատակիցների երեխաներին:

Հարունակությունը՝ էջ 5

ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի նիստը եւ «100 գաղափար ԱՊՀ-ի համար» մրցույթը

ՀՀ երիտասարդական մայրաքաղաք Կապանում մեկնարկել է ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի հերթական նիստը: Միջոցառման շրջանակում կանցկացվի նաեւ «100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջազգային երիտասարդական մրցույթի եզրափակիչ փուլի ամփոփումը:

ԱՊՀ երիտասարդության խորհրդի նիստին մասնակցում են ԱՊՀ անդամ պետությունների՝ Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Ղազախստանի եւ Տաջիկստանի ներկայացուցիչներ:

Միջոցառման մասնակիցներին ողջունել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը՝ նշելով, որ, ավանդաբար, ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերով խորհուրդն ամփոփում է նախորդ նիստում ընդունված որոշումների իրականացումը եւ բոլոր երկրների համար ուղեւշտում հաջորդ ժամանակահատվածի անելիքները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ անդրադարձել է նաեւ Հայաստանում երիտասարդության պետական քաղաքականության հիմնական ուղղություններին փաստելով, որ ՀՀ կառավարության առաջիկա 5 տարիների ծրագրում ամրագրված է ընդունվելու են երկու հիմնարար փաստաթղթեր՝ երիտասարդության զարգացման ռազմավարություն եւ օրենք երիտասարդության մասին:

«Հայաստանն առաջիկայում պլանավորում է ունենալ երիտասարդության քաղաքականության պետական ծրագիր, ռազմավարություն առաջիկա հինգ տարիների համար, որտեղ ներառված են բազմաթիվ ծրագրեր, այդ թվում՝ նաեւ երիտասարդության մասին օրենքի ընդունում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, թե մենք ինչքան շուտ կընդունենք երիտասարդության պետական ռազմավարության նախագիծը, որի մշակումն այժմ վերջնական փուլում է:

ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհուրդը շատ լավ հարթակ է միջպետական համագործակցության ծավալման համար: Տարբեր երկրներ բազմակողմ ձեռնարկով կարող են փորձ ձեռք բերել. օրինակ՝ մի երկրի կամավորության զարգացման փորձը, մյուսի՝ երիտասարդներին ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության մոդելը դիտարկել: ՀՀ պարագայում միգրացիոն օրինակելի կարող է լինել երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը:

Անդրադառնալով «100 գաղափար ԱՊՀ-ի համար» մրցույթին՝ նա նշել է, որ անդամ պետություններին հնարավորություն է տրվում ինքնուրույնաբար որոշելու այն մեխանիզմները,

որոնցով կընտրվեն լավագույն ծրագրերը: «Հայաստանը մինչ այժմ ընտրությունը կատարում էր գիտական նորույթի հիմքով, սակայն ապագայում կարեւորություն կտանք սոցիալական նորարարությանը»,- նշել է ՀՀ ԿԳՄՍ փոխնախարարը եւ հույս հայտնել, որ Հայաստանից ներկայացված նախագծերից որեւէ մեկը մրցութային անվանակարգերում լավագույնը կձանաչվի:

Նա նաեւ տեղեկացրել է, որ մրցութային կազմովիստեն «100 գաղափար ԱՊՀ-ի համար» մրցույթի շուրջ 50 հայտ է ստացել:

Ներկայացնելով ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի գործունեությունը՝ խորհրդի նախագահ Տատյանա Կովալեան նշել է, որ խորհրդի կազմում ընդգրկված են ԱՊՀ մասնակից երկրների երիտասարդության պետական քաղաքականության մշակմանը զբաղվող պետական կառավարական կառույցներն ու գերատեսչությունները:

«Խորհուրդը համակարգում է ԱՊՀ անդամ պետությունների միջեւ երիտասարդության քաղաքականության շրջանակում նախանշվող համագործակցությունը՝ համակարգելով մի շարք միջոցառումներ: Այսօրվա՝ Կապանում անցկացվող խորհրդի նիստը յուրահատուկ է, քանի որ նախ անցկացվում է ԱՊՀ հիմնադրման 30-ամյակի շրջանակում: Մենք, ըստ էության, այժմ ի մի ենք բերում երիտասարդության ոլորտում ԱՊՀ մասնակից պետություններում կատարված աշխատանքները եւ կարող ենք արձանագրել, որ կա ակնհայտ ձեռքբերում: Սա նաեւ փորձի փոխանակման շատ լավ հարթակ է՝ միմյանցից վերցնելու առավել հաջողված նախաձեռնությունները»,- նշել է Տ. Կովալեանը:

Ըստ նրա՝ խորհրդանշական է նաեւ միջոցառման անցկացումը Հայաստանի հարավային այդ քաղաքում՝ Կապանում, որն այս տարվա ՀՀ երիտասարդական մայրաքաղաքն է. «Մենք այժմ խորհրդի նիստում քննարկում ենք ԱՊՀ երիտասարդական մայրաքաղաքի նախագիծը, որի հիմքում դրված են մասնակից երկրների երիտասարդական մայրաքաղաքների հռչակման ծրագրերի փորձը»:

Նշենք, որ Կապանում տեղի ունեցող ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի նիստին ներկա են եղել ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի նախագահ Տատյանա Կովալեան, ՌԴ կրթության եւ գիտության նախարարության երիտասարդության քաղաքականության մշակման վարչության պետ Դենիս Աչիրովը, Ղրղզստանի Հանրապետության մշակույթի, տեղեկատվության, սպորտի եւ երիտասարդական քաղաքականության հարցերով նախարարի տեղակալ Շաբանբաե Կատան Կենեշը, «Ռուսաստանի երիտասարդական եւ մանկական սոցիալիզմի ազգային խորհրդի» փոխնախագահ Գրիգորի Պետուշկովը, Տաջիկստանի Հան-

րապետության կառավարությանն առընթեր երիտասարդության եւ սպորտի հարցերի հանձնաժողովի նախագահ Ռազմանզադա Կուրբանալին, Ուզբեկստանի երիտասարդության հարցերով գործակալության տնօրենի տեղակալ Ֆարուխ Ամանովը:

Բելառուսի Հանրապետության կրթության նախարարի տեղակալ Կադուբայ Ալեքսանդր Կլադիմիրին, Ղազախստանի ինֆորմացիայի եւ հանրային զարգացման նախարարի տեղակալ Ասկար Ումարովը ֆորումի աշխատանքին միացել են հեռավար:

Խորհրդի նիստին մասնակցելու նպատակով Հայաստան է ժամանել ավելի քան 6 տասնյակ պատվիրակ: Միջոցառմանը մասնակցել են նաեւ Կապանի քաղաքապետի տեղակալ Գոռ Թադևոսյանը, ԿԳՄՍ երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետ Գոհար Մամիկոնյանը, «100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջազգային երիտասարդական մրցույթի մասնակիցներ:

Մասնակից անդամները եւս ներկայացրել են իրենց երկրների երիտասարդության ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները:

Անդամ պետությունների պատվիրակները ֆորումի շրջանակում նաեւ ներկայացրել են, թե ինչ աշխատանքներ են կատարվել ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի 2021-22 թվականների՝ նախապես հաստատված աշխատանքային պլանի իրագործման ուղղությամբ: Պատվիրակները միաժամանակ անդրադարձել են մինչեւ 2030 թվականի ծրագրի հաստատմանը՝ շեշտելով մասնավորապես երիտասարդության կամավորական շարժման զարգացումը եւ ԱՊՀ անդամ պետություններում այդ նպատակին միտված իրավակարգավորումների մշակումը:

ԱՊՀ երիտասարդության հարցերով խորհրդի նիստի աշխատանքները շարունակվել են նաեւ հոկտեմբերի 12-ին:

Միջոցառման անցկացման վայրն ընտրել է հյուրընկալող երկիր Հայաստանը՝ հաշվի առնելով, որ Սյունիքի մարզի Կապան քաղաքը ՀՀ 2021 թվականի երիտասարդության մայրաքաղաքն է:

Միջոցառման շրջանակում Հայաստան այցելած ԱՊՀ պատվիրակների համար իրականացվել են մշակութային ծրագրեր: Մասնավորապես՝ կազմակերպվել է այցելություն Վահանավանք վանական համալիր, որի ընթացքում վանքի հոգեւոր հովիվ Տեր Ավետիքը ներկայացրել է 911 թվականին հիմնադրված վանքի պատմությունը: Երեկոյան Կապանի մշակույթի տանը տեղի է ունեցել համերգ՝ Կապանի մշակութային հաստատությունների սաների մասնակցությամբ:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ



Գյումրի

Շիրակի պետական համալսարանում կառավարման ճգնաժամը կհանգուցալուծվի

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանն այցելել է Շիրակի մարզ՝ տեղում ծանոթանալու մարզային բարձրագույն ուսումնական հաստատությունների խնդիրներին: Այցին մասնակցել է Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Էդգար Ալեքսանյանը:

Նախարարի տեղակալը շրջել է մարզկենտրոն Գյումրիում գործող պետական բուհերում՝ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանում (ՇՊՀ), Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Երևանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղերում, ծանոթացել ուսումնական ենթակառուցվածքներին, հանդիպումներ ունեցել պրոֆեսորադասախոսական անձնակազմի եւ ուսանողների հետ:

Շիրակի պետական համալսարանում կառավարման ճգնաժամը կհանգուցալուծվի

Փոխնախարար Կարեն Թռչունյանը Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի դասախոսական անձնակազմի եւ ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում՝ արձագանքելով նրանց այն մտահոգությանը, թե արդեն ավելի քան 11 ամիս բուհը չունի հոգաբարձուների խորհուրդ, այդ պատճառով չի կատարվում նաեւ ռեկտորի ընտրություն, նշել է, որ բուհի կառավարման ճգնաժամն առաջիկայում կհանգուցալուծվի: Կառավարության հաստատած՝ հոգաբարձուների խորհուրդների ձեւավորման նոր կարգով՝ բոլոր բուհերը պետք է ունենան 20-հոգանոց խորհուրդներ, որտեղ բոլոր կողմերը՝ պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողությունը, բուհի հիմնադիրը եւ լիազորված մարմինը, 25-ական տոկոս ներկայացվածություն ունեն: ՇՊՀ-ն պետք է խորհրդի անդամներ ընտրի ուսանողական եւ դասախոսական կազմի ներկայացուցիչներից, որոնց անունները ԿԳՄՍ նախարարությունը ներկայացվելուց հետո հնարավորինս արագ ՇՊՀ խորհրդի նոր կազմը կներկայացվի Կառավարության հաստատմանը:

Սոցիալական երաշխիքներ դասախոսին պետք է տա բուհը

«Ակադեմիական ազատությունը եւ բուհական ինքնավարությունը պետք է ունենան սահմանները դրանք անսահման չեն: Այդ սահմանն ավարտվում է այնտեղ, որտեղից սկսվում է կրթության որակը, որը բուհի ամենակարեւոր խնդիրն է: Ամենակարեւորը որակյալ կրթությունն է, ոչ թե ռեկտորի

ընտրությունը»,- հանդիպման ընթացքում նշել է Կարեն Թռչունյանը:

Անդրադառնալով այն հարցին, թե ինչու դասախոսները, ինչպես նաեւ բուհերին կից ավագ դպրոցները չունեն սոցիալական փաթեթ, նախարարի տեղակալը նշել է, որ պետությունը սոցիալական փաթեթներ է ապահովում ամբողջությամբ պետության կողմից ֆինանսավորվող կրթական, գիտական եւ մշակութային մի շարք ՊՈՒՎԿ-ների աշխատակիցների համար: Այն ներառում է առողջապահական ապահովագրություն, ինչպես նաեւ որոշակի գումար՝ տարվա կտրվածքով, որը շահառուն կարող է օգտագործել ուսման վարձավճարի, հիփոթեքային վարձի տոկոսավճարների եւ հանգստյան նպատակներով: Բուհերը հիմնականում ունեն հիմնադրամի իրավական կարգավիճակ, եւ օրենսդրությունը հնարավորություն է տալիս, որ բուհերն իրենց ինքնավարության շրջանակում սեփական միջոցներից ապահովեն առողջապահական ապահովագրություն եւ այլ սոցիալական երաշխիքներ: Կարեն Թռչունյանն առաջարկել է հարցը քննարկել ռեկտորների խորհրդում, ձեւավորել միասնական առաջարկ եւ այն ներկայացնել ԿԳՄՍ նախարարություն:

Պետք է մտածել բուհերի ուսումնական պլանները փոփոխելու մասին. դա իրական ակադեմիական ազատության հարց է

Դասախոսներից մեկը հարց է բարձրացրել, թե ծանրաբեռնված լինելով դասավանդմամբ՝ շատ դեպքերում իրենք ժամանակ եւ հնարավորություն չեն ունենում մասնակցել գիտական ծրագրերին, ինչն էլ իր հերթին չի նպաստում բուհերում հետազոտական բաղադրիչի մեծացմանը, որը պետությունը հռչակել է բուհական ոլորտի առաջնահերթություն:

Ի պատասխան՝ նախարարի տեղակալը նշել է, որ այդ խնդիրն առկա է բոլոր բուհերում, եւ ինքը խնդրին ծանոթ է նաեւ որպես ԵՊՀ դասախոս:

«Մենք՝ դասախոսներս, պետք է ինքներս մեզ հարց տանք՝ ո՞րն է ավելի կարեւոր՝ դասախոսական ծա՞մը, թե՞ որակյալ կրթությունը: Եթե առաջնայինը համարում ենք



որակյալ կրթությունը, ուրեմն պետք է մտածենք բուհերի ուսումնական պլանների վերակազմակերպման եւ փոփոխության մասին: Դասախոսի ծանրաբեռնվածության մեջ, բացի դասավանդման կրեդիտից, պետք է անպայման ներառել նաեւ հետազոտական բաղադրիչ, կրեդիտներ տալ շարժունության համար, սահմանել պահանջ արդյունավետ գիտական գործունեության համար, որի չափելիությունը սահմանված է Գիտության կոմիտեի կողմից»,- պարզաբանել է Կարեն Թռչունյանը՝ ընդգծելով, որ բուհական ուսումնական ծրագրերի փոփոխությունը լիովին տեղավորվում է բուհերի ակադեմիական ազատության եւ ինքնավարության տիրույթում:

Նա նաեւ հավելել է, որ Գիտության կոմիտեն տարբեր մրցույթներ է հայտարարում, եւ շատ լավ կլինի, որ բուհերի դասախոսները մասնակցեն դրանց, ստանան գիտական դրամաշնորհներ: ԿԳՄՍ նախարարի տեղակալը նաեւ տեղեկացրել է, որ Գիտության համար նախատեսված հատկացումները 2022 թվականի պետական բյուջեի նախագծով ավելի քան 80 տոկոսով ավելացել են:

Ուսանողներն ավելի լայն լիազորություններ ունեն, քան դասախոսները

Շիրակի պետական համալսարանի ուսանողական խորհուրդը ձեւավորվել է 2020 թվականին: Նրանք արդեն ընտրել են, թե ուսիրհրդի որ անդամներն են ընդգրկվելու բուհի հոգաբարձու-

ների խորհրդում: Կարեն Թռչունյանի հետ հանդիպմանը ՇՊՀ ուսիրհրդի նախագահ Գետրո Դուկասյանը նշել է, որ իրենք ունեն բազմաթիվ ծրագրած աշխատանքներ եւ սպասում են նոր խորհրդի ձեւավորմանը՝ շեշտելով, որ արդեն 3 տարի շարունակվող կառավարման ճգնաժամը խոչընդոտում է նաեւ իրենց ծրագրերի իրականացմանը:

Արձագանքելով բուհերի խորհուրդների ձեւավորման սկզբունքների մասին հարցին՝ փոխնախարարը փաստել է, որ ուսանողները բուհի կառավարմանը մասնակցելու ավելի շատ լծակներ ունեն, քան դասախոսները:

«Կառավարման խորհրդի անդամների 25 տոկոսին ընտրում են ուսանողները՝ ուսիրհրդի կազմից: Բացի դրանից՝ ուսիրհրդի ներկայացուցիչները գիտիրհրդի կազմում ընտրում են այն դասախոսներին, որոնք պետք է ընդգրկվեն կառավարման խորհրդի մեջ՝ որպես պրոֆեսորադասախոսական համակազմի ներկայացուցիչներ: Մինչդեռ դասախոսները որեւէ կերպ չեն մասնակցում ուսիրհրդի անդամների ընտրությանը»,- նշել է նա:

Երազմուս+ ծրագրի շրջանակում ՇՊՀ-ում գործում է կենսաբանության լաբորատորիա

Այցի ընթացքում Կարեն Թռչունյանը Շիրակի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Երվանդ Սերոբյանի ուղեկցությամբ ծանոթացել է բուհի ուսումնական պայմաններին: Շիրակի պետական համալսարանն ունի շուրջ 2700 ուսանող, բուհում այժմ ընթանում են հեռակա բաժնի ընդունելության քննությունները:

Կարեն Թռչունյանը մասնավորապես հետաքրքրվել է գրադարանի, կենսաբանության եւ քիմիայի լաբորատորիաների հագեցվածությամբ: Փոխնախարարին ներկայացվել են երկու տարի առաջ Երազմուս+ ծրագրի շրջանակում դրամաշնորհային աջակցությամբ բացված կենսաբանության լաբորատորիայում իրականացված հետազոտությունները:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հաստատվել է ընդունելության կարգը

սկիզբը՝ էջ 4

Երեխայի հերթագրում

Համապատասխան տարիքային խմբում երեխայի հերթագրումն իրականացվում է տվյալ օրացույցային տարվա հունվարի 1-ից, եթե տարիքը լրացել կամ լրանում է մինչեւ տվյալ օրացույցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Երեխայի հերթագրումը հաստատություն իրականացվում է երեխայի ծնողի դիմումի (թղթային կամ էլեկտրոնային) հիման վրա: Երեխային հաստատություն ընդունելու համար հերթագրելու մասին դիմումը ներկայացնելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում երեխան հաշվառվում է համակարգում կամ հերթագրման թղթային մատյանում: Դիմումը ենթակա է մերժման՝ ներկայացված տվյալների ոչ լիարժեքության կամ անհամապատասխանության դեպքում: Այս դրույթները պարտադիր չեն նախադրոցական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատությունների համար:



Տարիքային խմբերի ձեւավորում

Հաստատությունում խմբերը ձեւավորվում են սաների ծննդյան տարեթվի հիման վրա եւ տարբեր տարիքի երեխաների համակազմով:

Տարիքային խմբերում սաների առավելագույն թիվ սահմանվում է՝

- 1) վաղ մանկության տարիքի առաջին խումբ (0-1 տարեկան)՝ 15 սան.
2) վաղ մանկության տարիքի երկրորդ խումբ (1-2 տարեկան)՝ 20 սան.
3) կրտսեր առաջին խումբ (2-3 տարեկան)՝ 20 սան.
4) կրտսեր երկրորդ խումբ (3-4 տարեկան)՝ 30 սան.
5) միջին խումբ (4-5 տարեկան)՝ 30 սան.
6) ավագ խումբ (5-6 տարեկան)՝ 30 սան:

Կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների թիվը խմբում չի կարող գերազանցել խմբում ընդգրկված սաների ընդհանուր թվի 10%-ը:



## Լրագրողական լավագույն աշխատանքի մրցույթ

սկզբը՝ էջ 1

Մրցույթն ամփոփվեց հանդիսավոր մրցանակաբաշխությամբ, որը տեղի ունեցավ Մայր բուհի Եղիշե Չարենցի անվան լսարանում: Հանդիսությունը վարում էր ժուռնալիստիկայի ֆակուլտետի նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Դավիթ Պետրոսյանը**, ով նաև մրցույթի ժյուրիի նախագահն էր: Բազմամարդ լսարանին ներկայացվեց 10 զեկուցում եւ 2 տեսաֆիլմ:

Ժյուրիի որոշմամբ՝ երկու առաջին մրցանակներին (200.000-ական դրամ) արժանացան ժուռնալիստիկայի ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի **Շողեր Սահակյանը** («*Բաց նամակ Ձավեն Շարաֆյանին*», տեսաֆիլմ) եւ 3-րդ կուրսի ուսանող **Բագրատ Մարտիրոսյանը** («*Արտագաղթի եւ հայրենադարձության թեման Արտաշես Բալանթարյանի ստեղծագործություններում*», զեկուցում):



Երրորդ առաջին մրցանակը ժյուրին շնորհեց երկու մասնակցի (100.000-ական դրամ)՝ ժուռնալիստիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանողուհի **Մարինա Մկրտչյանին** («*Բաց նամակ Ձավեն Շարաֆյանին*», զեկուցում) եւ 4-րդ կուրսի ուսանողուհի **Էլիզա Գալուստյանին** («*Բաց նամակ Ձավեն Շարաֆյանին*», տեսաֆիլմ): Եվս 6 մասնակցի, որպես խրախուսական մրցանակ, պարգևատրվեցին Արտաշես Բալանթարյանի գրական ժառանգությունը ընդգրկող էլեկտրոնային գրքերով:



Յաջողություններին մրցանակները հանձնեց գրողի որդին՝ երկիծաբան **Ալեքսանդր Բալանթարյանը**:

### Բաց նամակ Ձավեն Շարաֆյանին (տեսաֆիլմի բովանդակությունը)

Մենք սուտասան ենք, շեղում ենք մարդկանց ճշմարտությունից, մեզ ոչ մի տեղ չեն սպասում, կաշռակներ ենք, դեմագոգ... մենք ժուռնալիստ ենք:

Ողջույն, կոլեգա: Ձեր ժամանակներից անցել է կես դար, ու ոչինչ, գրեթե ոչինչ չի փոխվել: Մեզ դեռ համարում են դեմագոգ ու կաշռակներ, մեր գրիչը թեթև են գնահատում, իսկ մեզ թերագնահատում են: Մեր միակ զենքը՝ խոսքը, ձեռքներիցս վերցնում են ու հարցնում են, թե որտեղ ենք մենք: Ուր ենք կարելուր պահերին, ինչու չենք խոսում, իսկ խոսելիս ինչու է մեր ձայնը կամաց լսվում: Իրավունքներն են պակասում, թե՛ արդեն այնքան շատ են, որ խանգարում են, կամ միզուցե չկան ընդհանրապես, կամ կան միայն թղթի վրա, իսկ թղթերը միշտ մի անկյունում գցված են լինում, հաճախ ճնշված: Մեզանից շատերը փորձում են ու գտնում են անհրաժեշտ այդ թղթերից եւ հպարտ դեմ են տալիս հասարակությանը, իսկ հասարակությունը նորից ճնշում ու գցում է մի կողմ:

Ու շատերը կորցնում են իրենց հավատը դառնում են Արմեն Ջատիկյան, երազում են ծառայել ժողովրդին ու պետությանը, բայց հաղթում են ոմանց անձնական շահերը, ու նրանց վերջին հույսը ծաղիկ աճեցնելն է մնում:

Ու առաջին մարդը, ով օգնության պետք է հասնի, որ պետք է օգնի գտնել այս մարդկանց հույսը, գոռալ արդարության մասին ի լուր աշխարհի, լրագրողն է: Բայց առանց իրավունքի, խեղճ ու կրակ, էլ ինչ լրագրող: Նա միայն թուղթ սեւեւացնող է, ձեռքի հետ էլ իր ամունն է սեւեւացնում:

Հիմա թվում է, թե բոլորը ունեն իրավունքներ, կարողանում են օգտվել այդ իրավունքներից, ազատ են խոսքում ու գործողություններում, չկան Արմեն Ջատիկյաններ, որոնք կորցրել են հավատը, իսկ հանցագործ Աղո-Վաղդները իրենց պատիժը ստանում են, ինչպես հարկն է... հավատացիք...

«Սովորեցրու՜ ինձ քայլել հոսանքին հակառակ, սովորեցրու՜ լինել անդրդվելի բոլոր խոչընդոտների դեմ, սովորեցրու՜ չզայթակղվել, չվախենալ, սովորեցրու՜ ապրել հանունի համար, ու մի քիչ էլ լինել քո հոր զավակը»:

Ու ասացե՛ք խնդրեմ, կգան ժամանակներ, որ հասարակությունը մեզ կհամարի արդար, ազնիվ ու մարդիկ վերջապես կմտածեն, որ մենք խղճից դողված ենք քայլ արել, եւ ոչ թե նրա համար որ մեզ կաշռակ են կամ ինչ որ մեկը ուժի դիրքից արգելել:

Ես հիմա քո տեղում եմ, քո ճանապարհի սկզբում, մռայլ քաղաքում, անհավատ եւ անսկզբունք մարդկանց շրջապատում: Վաղը քո գրիչն արդեն իմ ձեռքում կլինի, բայց արդյո՞ք ես կդառնամ Ձավեն Շարաֆյան, արդյո՞ք չի կորչի ընդհանուրին ժառանգելու իմ կամքը, երազանքը եւ ոգեւորվածությունը:

Կմտախոսեմ ոգեշնչվածությունս, կներդնեմ ջանքերս Արմեն Ջատիկյանների հավատը գտնելու համար:

Շողեր ՍԱՀԱԿՅԱՆ

### Կարոտի գույները կամ արտագաղթի եւ հայրենադարձության անհամաչափ գուլգահեռականներում

1979 թվականին, Երեւանում, «Սովետական գրող» հրատարակչությունը լույս է ընծայել գրող, հրապարակախոս Արտաշես Բալանթարյանի «Բացե՛ք ձեր աչքերը» գիրքը:

Հրատարակչությունը հարկ է համարել ընթերցողին ծանուցել. «*Ժողովածուում տեղ գտած պատմվածքները աշխարհով մեկ սփռված հայերի դառը ճակատագրի, դարասկզբի ողբերգական դեպքերի (թերեւս ցեղասպանությունն են նկատի ունեցել- Բ.Ս) մասին են:*

«Բացե՛ք ձեր աչքերը» պիեսի հերոսուհին երիտասարդ աղջիկ է, որին ծնողները բռնի տանում են Փարիզ: Աղջիկը այնտեղ գտնվում է, չհամակերպվելով կապիտալի աշխարհի օրենքներին»:

Գրքի լույսընծայումից մինչեւ մեր ապրած ժամանակը, մեր դժվար ու բարդ օրերը, անցել է չորս տասնամյակից ավելի: Այլեւս անցյալ են սովետական, խորհրդային իրականությունը, կոմունիստական գաղափարախոսությունը, «Սովետական գրող» հրատարակչությունը, բայց մեզնում ինքնահաստատվում է «կապիտալի աշխարհը», եւ որ ամենակարեւորն է ներկա է հեղինակը. նա շարունակում է լինել մեր ժամանակակիցն ու ուղեկիցը:

Եվ պատահական չէ, որ գիրքն ընթերցելիս (իսկ ընթերցել եմ մի քանի անգամ), մտովի գրուցում էի Արտաշես Բալանթարյանի հետ, համաձայնում, ոգեւորվում, բանավիճում, նաեւ զարմանում, որովհետեւ ոչ թե տողատակին, այլ բաց կեցողով հեզում է սովետական իրականությունը, կեղծ բարեպաշտությունը, քննադատում այն միջավայրն ու մթնոլորտը, որի պատճառով 1946-1947-ին հայրենադարձված մարդիկ հիասթափված ուզում են մեկնել հայրենիքից՝ դառնացած ու վիրավորված (եւ ինչո՞ւ միայն նրանք)...

Եվ վերջապես, գուցե ամենահետաքրքիր գագոցությունը, որ ունեցել եմ նաեւ այն ժամանակ, երբ կարդում էի «Ծերունին եւ ծովը» (The old man and the sea) պատմվածքի հայերեն թարգմանությունը. սիմվոլների, խորհրդանիշների ապշեցուցիչ առատություն. ծովը, տղան, նավակը, ցանցում հայտնված ձուկը, որի կմախքն է ափ հասնում...

Արտաշես Բալանթարյանը հենց այդ, առաջին հայացքից սովորական թվացող, սակայն ուժեղ, գտնված սիմվոլ-

խարխիլների վրա է իր ասելիքը կառուցում. «Նա վաղուց էր գզացել, որ տանը խոսում է ինքն իր հետ, բայց ոչինչ անել չէր կարող եւ չէր ուզում:

Նա հենց այնպես չէր խոսում: Խոսում էր, որովհետեւ հարցեր էին տալիս եւ որովհետեւ ինքն էլ հարցեր ուներ տալու: Տուներ ձայներով լի էր:

Գլխավոր հերոսի՝ Վահրամ Ռշտունու կերպարը ամբողջանում է սիմվոլների, (խորհրդանիշների) միջավայրում. հայելի, ծայն(եր), ցած իջնող աստիճանավանդակ, թռռնիկի նկարած տունը, որ դուռ չունի եւ ծխելույզի ծուխը, որը ոչ թե ուղիղ վեր է բարձրանում, այլ թեքվում է եւ կողքի գնում...

Սիմվոլների այս առատությունը «Ձայներ»-ում ամբողջանում է եղենու կանաչ ճյուղով, որն այդպես էլ տոնածառ չի դառնում, եւ դույլի մեջ լցված կրակով...

Վերափոխեմ ասելիքս. դրանք ամբողջացնում են միայնակ մարդու (ավելի ճիշտ՝ լքված մարդու) ողբերգությունը... «Փոստի հեռագրական բաժանմունքում նա երկար ժամանակ նստած էր հեռագրաթղթի առջեւ ու գրիչն աննպատակ թաթախում էր թանաքի մեջ: Նա մտքում երկար խոսում էր որդու, հարսի ու թոռնիկի հետ...»:

Վահրամ Ռշտունու ողբերգությանը, արտագաղթած գավակի, հարսի ու թոռնիկի բացակայությամբ իր կյանքում ահագնացող անայությանը Արտաշես Բալանթարյանը հակադրում է դպրոցի պահակի ու հավաքարարի բազմանդամ (զուցե մեղ, սուղ ապրող) ընտանիքների ձգող, ջերմ մթնոլորտն ու նախանձելի երջանկությունը:

Բեռնավորված սիմվոլների (խորհրդանիշների) ինչպիսի՜ առատություն է «Կարոտի գույները» գրական սցենարում: (Ի դեպ «Ձայներ»-ով բացվում գիրքը, իսկ «Կարոտի գույները» եզրափակում է այն): Սիմվոլներից այստեղ կրկնվում է միայն հայելին. «...Խոչոր, կլոր հայելու մեջ արտացոլվում է փոքրիկ տղայի դեմքը: Նայում է, ծպտում, աչքով է անում»:

«Կարոտի գույները» գրական սցենարում Արտաշես Բալանթարյանը նոր սիմվոլներ է բերում. անզուգույն հետեւանքով հտակին ընկած ու բացված ճամպուրկը, որն ուզում են ամեն կերպ արագ փակել, ճամպուկից դուրս թռած արհեստական ծաղիկը, որի ցողունը եր-

կաթե զսպանակ է, կրկես մտնող հյուծված ձին, որին պիտի ուտեն առյուծները, սառնորակ աղբյուրը, որից ջուր խնելու համար պիտի ծնկել եւ, վերջապես, անտառը անսկիզբ ու անվերջ...

Այս շարքը կշարունակեմ հետո, բայց կա հետաքրքիր ընդհանրություն. ինչպես «Ձայներ»-ում, «Կարոտի գույները» գրական սցենարում եւս լքված, միայնակ, հայրենիքի իրեն վստահված հատվածը իր ներկայությամբ կենսունակ պահող անհատի ողբերգական կերպարն է կամ կերպարի ողբերգականությունը:

Վահրամ Ռշտունին եւ գյուղում (անտառում) ապրող, աշխարհից խռոված հորաքույր Նանին..., որը նաեւ լքված հայրենի եզերքի խորհրդանիշն է՝ աչքը հարազատների ճանապարհին...

Նանիի տնակում փոքրիկ տղան պիտի զարմացած նայի այն լուսանկարին, որտեղ հայրը իր տարիքին է Նանիի կողքին նստած...

- Ո՞ւմ երեխեն ես,- հարցնում է Նանին:

- Այս տղայի տղան եմ...

- Իսկ էդ տղան ո՞ւր է...

Մտածե՛ք, որ սա հարց չէ, բողոք է, գայրույթ է, բացատրության պահանջ է, նույնիսկ մեղադրանք՝ դասալիք ես, քեզ վստահված սահմանը թողել ես անտեր...

Եվ սիմվոլների հաջորդ շարքը. «Նանին տակառից հին դույլով ջուր է վերցնում եւ անցնում է բացատով դեպի կարասները: Քայլում է սպիտակ ծաղիկների վրայով:

Դույլից երեք տեղից մեղ չիթով հոսում է ջուրը եւ որտեղ ընկնում է՝ կարսրում են սպիտակ ծաղիկները»:

Կարմիրը միայն գույն չէ այս դեպքում: Ծաղիկը դարձյալ ճերմակում է, երբ հայտնվում է տղայի ձեռքում, ճամպուրկից անզուգույն դուրս թռած երկաթե զսպանակով ծաղիկին ի հակադրություն...

Սիմվոլների այս շարքը ամբողջացնում է փողոցը..., որով անցնում ենք բուլուրս եւ որը պահում է մեր ոտնահետքերն ու ձայները:

«Ձայներ»-ն ու «Կարոտի գույները» հայրենիքի, հայրենի եզերքի հանդեպ սիրո, այլ կերպ՝ տեր ու գավակ լինելու մերկապարանոց քարոզչություն չեն: Հեղինակը գտել է դեպի ընթերցողի սիրտը տանող ճանապարհը:

Հարունակությունը՝ էջ 7



## Կարոտի գույները

# Կամ արտագաղթի եւ հայրենադարձության անհամաչափ զուգահեռականներում

սկզբը՝ էջ 6

Պա եւ թերեւս պատճառը, որ փոխվել են ժամանակները, փոխվել են մարդիկ, փոխվել են նրանց արժեքազանքները, բայց Քալանթարյան գրող-հրատարակչության, նուրբ, բացառիկ էսթետի ասելիքը շարունակում է մնալ պահանջված ու արդիական:

Այսօր էլ «Չեռախոսագրքեր»-ի հերոսի արարումները հուզում են ինձ, իմ հասակակիցներին, ինչպես հուզել են չորս տասնամյակ առաջ...

Արմեն Գասպարյանը նաեւ մեր ժամանակակիցն է, մեր կողքին ապրող, հաճախ՝ իր ցավին անհաղորդ մարդկանցով շրջապատված: Ինքը որոնում է պատերազմում անհետ կորած եղբորը՝ Մելիքին... ու գտնում է Մուշեղին, ով եւս երկրորդ աշխարհամարտի մասնակից է եւ հայրենիքում անհետ կորած է համարվում, բայց այլ անուն-ազգանունով ապրում է հայրենիքից հեռու, անհայտության մեջ: Այնքան նման է այնքան տարբեր «Կողմեր»-ի հերոսից՝ Պանդուխտ Զարեքյանից, որ անտարբեր նետում է. «... երկն մայրս մեռավ: Երկուշաբթի պետք է թաղենք...»:

Կարծիքները տարբեր կարող են լինել, բայց համոզված եմ «Քաղցր ծեր աչքերը» գրքի մեղքը, առանցքը, հեղինակի խտաց-

ված ասելիքը, տագնապն ու զայրույթը մեկտեղված են «Կողմեր»-ում:

«Կողմերը միակ կենդանիներն են, որ Ավստրալիայից բացի ուրիշ տեղ չկան: Շատ են փորձել նրանց բնակեցնել այլ երկրներում, բայց կողմերը հայրենիքից դուրս չեն կարողանում ապրել, ոչնչանում են»:

Պատահակա՞ն է, որ «Չեռախոսագրքեր»-ի եւ «Կողմերի» հերոսը նույն մարդն է՝ Արմեն Գասպարյանը: Ես նրան նույնացնում եմ հեղինակի հետ...

Նա հայտնվել է ավստրալիական քաղաքում, որտեղ ընդամենը մեկ հայ կա՝ Պանդուխտ Զարեքյանը:

Չարմանակի է հայ մարդը՝ որդուն կոչում է Պանդուխտ, Կարոտ, Զայրենիք... Այդ անուններից յուրաքանչյուրը նաեւ ճակատագիր է...

Պանդուխտի մայրը մահացել է մեկ օր առաջ... միայնության մեջ...

Չեղինակը վարպետորեն ընդգծում է Պանդուխտի միայնությունն ու խեղճությունը՝ մահացած մոր, անգուլի կնոջ եւ ունակող զավակների ներկայությամբ:

Սոր մահվանը անհաղորդ Պանդուխտ Զարեքյանը, որ ապրում է ներաշխարհի բացակայությամբ... այլ կերպ՝ առանց հոգու եւ սրտի:

Եկեղեցում Մոգարտի ռեքվիեմը, գար-

մանալիորեն ահավոր ու սրտամաշ, ոչ թե հանգուցյալ Զայկանուշ մայրիկի, այլ նրա Պանդուխտ որդու տեսակի կորուստն է ընդգծում...

«Արմեն Գասպարյանը քանից օձիքը... նա քայլում էր այնպես, ասես փախչում էր: Եվ նրա աչքի առաջ ամենուրեք կողմեր էին երեսուն՝ խոճալի, միամիտ, անպաշտպան կողմեր, կորած կողմեր»:

Սիմվոլների լեզուն սիրող հեղինակը այս դեպքում կարծես հրաժարվում է դրանցից եւ կողմերն հետ գեղարվեստական բացառիկ համեմատությունը գրական իր գյուտն է ժամանակի մեջ երբեւէ չծերացող:

Սիմվոլների լեզվից Արտաշես Քալանթարյանը գրեթե պիտի հրաժարվի «Քաղցր ծեր աչքերը» պիեսում... խոսելով բաց տեքստով: Այդպես փորձելով կանխել ահագնացող հուժկու ալիքի հարվածը:

Թերեւս չկարահանելով, որ տարիներ հետո հայկական հեռուստատեսություն կհայտնվեն հաղորդումներ, որոնց հեղինակները հեռուստատիտոլի համար «կբացահայտեն» հայրենիքը 1970, 80, 90, 2000-ականներին թողած «հաջողակներին»՝ օտար ախեթուն յուրային չդարձած, բայց հայրենիքից ու հայրենի բարքերից օտարացած անհուսորեն:

Քաղաքա ՄԱՐՏԻՈՍՅԱՆ

# Նամակ «Իսկ դո՞ւք որտեղ էիք» ստեղծագործության գլխավոր հերոս Զավեն Շարաֆյանին

Ողջուն, Զավեն Շարաֆյան: Այս կասկածելի նամակի հեղինակին կարող ես համարել որպես թո թոյր կամ ապագա գործընկեր, ում բախտ կվիճակվի աշխատել թո խմբագրությունում: Դե, ուրեմն ծանոթանանք: Ես Մարինեն եմ: Ֆակուլտետը, որն ավարտել ես տարիներ առաջ, հիմա ես եմ սովորում: Կհավատաս, թե ոչ, բայց մենք ունենք շատ նմանություններ՝ կապված բնավորության հետ: Կուրսում շատերը նման են թո կուրսընկերներին, բայց մի տարբերություն կա. ընդհանուր 65 հոգի ենք, բայց մի լսարան կա, որ, երբ մտնում ենք այդտեղ, միանգամից 69-ն ենք դառնում. Նորայրը, Վաչագանը, Սլավան եւ Աշոտը միանում են մեզ: Զավեն, չեն պատմում պատերազմի մասին, որին զնայցիս, այլ մենք մայրս ենք ուղղակի-յան մեջ եզերված նրանց նկարներին ու դրա մասին կարդում նրանց աչքերի մեջ աջակցով:

Զավեն, ֆակուլտետում հիմա դասախոսական կազմը լրիվ փոխվել է, նրանց մասին շատ չեմ ուզում պատմել, որովհետեւ այստեղ եւս մեկ անգամ սովորելու ցանկությունը սկսելու է քեզ ամեն օր տանել, իսկ դա քեզ անել չի հաջողվի: Բայց մի բան կա, որ ուզում եմ քեզ ասել. պատերազմի օրերին դասախոսներ կային, որ միանգամից գնացին առաջնագիծ: Մի քանի դասախոսներ, ովքեր նաեւ լրատվական թողարկումների մեկնաբաններ են, աշխատում էին արտակարգ ռեժիմով: Ավելի Նորածր կուրսի ուսանողներն անգամ դասերն արել են երեկոյան ժամերին, հեռավար տարբերակով: Ասում են՝ դասախոսն ապաստարանում է եղել, այնտեղից կապի դուրս եկել ուսանողների հետ ու դաս արել՝ պայթյունի ծայրի տակ, ու դա այն դեպքում, երբ դառը բաց թողնելու պատճառը հիմնավոր էր: Մի խոսքով, հանգիստ կարող ես չունչ քաշել. քեզ նման լրագրողները շատ են, ու վարդան բաղալյանները երկար չեն կարող հաջողություն ունենալ մեր երկրում:

Պիտի գարնացնեն քեզ, Զավեն, բայց

քաղաքը, որտեղ դու էիր ապրում, ու քեզ թվում էր, թե Արմեն Չատիկյանը մեկն է, ու նրա նմանն էլ չկա, այդպես չէ: Հիմա քեզ կգարնացնեն, ոչ թե հայտարարությունները, որտեղ ասվում է՝ «կորցրել եմ հավատս», այլ հակառակը՝ «գտել եմ հավատս, ու հիմա ման եմ գալիս մնացածիցը». հավատը չկորցրածները քչացել են: Հա, ու մեկ էլ՝ նրանցից բոլորի հավատքն էլ տարբեր է, ասենք՝ հավատք դեպի հայրենիքը, ընտանիքը, սիրած աղջիկը, աշխատանքը... Իհարկե, շարքը կարող եմ շարունակել, բայց չգիտեմ սրանցից վախենալու մասին այն է, որ կորցրել ենք հավատքն Աստծո հանդեպ, թե՛ ինքններս մեր Ու գիտեմ՝ ինչու, Զավեն, որովհետեւ մեր երկրում արդեն շատերը ծոցագրայաններում ալիքի են պահում: Չգիտեմ կհավատաս, թե ոչ, բայց գոնե ինձ համար գերադասելի կլինեմ, որ այդ ալիքին Չատիկյանի ասած ալիքից լինեմ: Ասենք՝ ծաղիկներ աճեցնեմ: Հա, Զավեն, հա: Ծաղիկները գոնե օգուտ են տալիս. դե սիրում են, տղան սիրած աղջկան, թրոջը կամ մորն է մկիրում ու երջանկացնում, բացի դա, ծաղիկներ կան, որոնցից մուրաբա կամ թեյ են պատրաստում: Զավեն, հիմա որպես արդարացում ասում եմ՝ ես պարզապես տեղյակ չեմ, կամ էլ դրա մասին մամուլից եմ իմացել: Հա, պատերազմը դադարեցնելու մասին հայտարարություն են ստորագրում, ու երբ ժողովրդի դժգոհությանն են հանդիպում, պարզապես ասում են՝ տեղյակ չեմ: Ծիծաղող գալիս է, չէ՞: Երբ պետք է լինում, նրանք երկիրը ներկայացնողներն են, երբ պետք է լինում՝ երկրի հետագան որոշող փաստաթղթերի մասին ստորագրելուց հետո են իմանում: Հիմա ասա՛ վարդ ու կակաչ աճեցնելն ավելի լավ չի՞. դա գոնե քիչ-շատից օգուտ է տալիս:

Մեզ չեն կանգնել ու ասել, որ այս պատերազմին մենք պատրաստ չենք եղել, որ 30 տարվա ընթացքում ոչինչ չենք արել ու մատներս մատներս չենք տվել, որ հաշվի չենք առել, որ թշնամիներով շրջապատված երկիր ենք, ու, վար թե ուշ, սա պա-

տահելու է: Ալիքի ունեն՝ թե մախորդներն են մեղավոր, մախորդներն ասում են՝ ներկաներն են մեղավոր: Բուրբ մեղավոր են՝ բացի իրենցից, որովհետեւ ինքներս մեր հանդեպ ունեցած հավատքն ենք կորցրել ու մոռացել, որ ծովը մի կաթիլ ջրից ծով չի դարձել, որ բարձրահարկ շենքի հիմքը անօր տարածություն չէ ու միայն վերջին հարկը են որ մենք դրա մեջ ունենք մեր մեղքի բաժինը:

Զավեն, ես էլ շատ անգամ հաշվի չեմ առել: Դպրոց եմ գնացել ու շատ անգամ դասը չհասկանալու, տնայինները չգրելու համար մեղադրել ուսուցչիս, բայց երբեք չեմ կանգնել ու ասել՝ ես փորձել եմ մի քանի տարբերակ, ահա տեսք ու ասեք՝ որտեղ եմ սխալվել: Բայց հիմա, Զավեն, հիմա... Հիմա Նորայրը, Վաչագանը, Սլավան եւ Աշոտն ամեն անգամ մայրս են ինձ: Նայում եմ ու ասում թող ձեռքդ չդրու ճշմարիտի մասին գրելիս, թող քեզ շատ անգամ նույնիսկ պատահան չափից դուրս անկեղծ ու սուր գրելու համար, թող քեզ հեռացնեն աշխատանքից ու թող շատերի աչքի փուշը լինես, որովհետեւ թո շատերի ապագան: Իսկ ապագան հայտորդող տարիները չեն, այլ այսօրն է, այսօրվա դեռ չապրած հաջորդ վայրկյանը, որ ապրելուց հետո անցյալ է դառնալու:

Զավեն, իմացի՛ր, որ թո կողքին կա գոնե մեկը, ով պատրաստ է իր ձեռքից եկածի չափով, իր ուժերի ու հնարավորությունների չափով ամեն ինչ անել, որ պակասի հանցագործությունների թիվը, պակասի չարը: Եթե ոչ անձամբ, ապա մատնացույց անելով, մերկացնելով ու տագնապ հնչեցնելով: Ես դա կանեմ, որպեսզի մեր երկրում պակասեն վարդան բաղալյանները, որովհետեւ ամեն անգամ լրագրող ազատամարտիկների լսարան մտնելիս իմ աչքերի մեջ մայրս եմ հերոս Նորայրը, Վաչագանը, Սլավան ու Աշոտը...

Քեզ շատ հարգող՝ Մարինե ՄԿՐՏՅԱՆ

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաղաքահայր հ. 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ, 8 դասաժամ), երաժշտության (16 դասաժամ), աշխարհագրության եւ բնագիտության (19 դասաժամ), հասարակագիտության (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
  - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
  - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
  - անձը հաստատող փաստաթուղթ,
  - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
  - ինքնակենսագրություն (Չե 5),
  - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
  - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
  - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
  - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ անկա եւ թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթ տեղի կունենա հոկտեմբերի 29-ին՝ ժամը 15:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Քաղաքահայր հ. 2 միջնակարգ դպրոցում, հասցեն Քաղաքահայր, Արվանակ 12:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 3-21-23, (055) 28-11-01 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի Վիլյամ Սարգսյանի անվան հ. 11 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կերպարվեստի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
  - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
  - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
  - անձը հաստատող փաստաթուղթ,
  - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
  - ինքնակենսագրություն (Չե 5),
  - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
  - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
  - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
  - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ անկա եւ թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 13-ից մինչեւ հոկտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթ տեղի կունենա հոկտեմբերի 28-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի Վիլյամ Սարգսյանի անվան հ. 11 հիմնական դպրոցում, հասցեն ք. Հրազդան, Միկոյանց քաղաքահայր, 14 փ., 14:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0223) 3-28-51, (094) 40-03-32 հեռախոսահամարներով:

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեսնամյակի օրերը թերզարգացում ունեցող երեխաների հ. 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ի հայրենագիտության (24 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
  - դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
  - բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
  - անձը հաստատող փաստաթուղթ,
  - «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
  - ինքնակենսագրություն (Չե 5),
  - այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
  - ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
  - հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
  - որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ անկա եւ թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:


Մրցույթ տեղի կունենա հոկտեմբերի 28-ին՝ ժամը 14:00-ին, Երեսնամյակի օրերից հարցազրույցում ունեցող երեխաների հ. 11 հատուկ (օժանդակ) դպրոցում, հասցեն ք. Երեսնամյակ, Նուբարաշեն, 6-րդ փողոց, 1-ին շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-52-40 հեռախոսահամարով:


# Ճ ա ն ա չ ե լ զ ի մ ա ս տ ու թ ի լ ն ե լ զ ի ր ա տ

## Մարգարիտներ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ քնարերգությունից

## Պատմահայր ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ քնարերգակ




Օով կենցաղոյս հանապազ գիս ալելոծէ, Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ. նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւեն: Ի համբառնալ իմուն առ քեզ զաչս իմ՝ օգնեա՛ ինձ, տէր: Ի յօրնութիւն նոր օրհնեսցուք զքեզ, Քրիստոս փրկիչ մեր: Այցելու մեր եւ փրկիչ, կեցո՛ր զանձինըս մեր:



\*\*\*  
Ի նեղութեան իմուն օգնեա՛ ինձ, տէ՛ր, Որպէս երբեմն Յովնանու, եւ ողորմեա՛:  
Ի յանցանաց իմոց մաքրեա՛ գիս, տէ՛ր, Որպէս երբեմն զմաքսաւորն, եւ ողորմեա՛:  
Ի նենգաւոր շղթանց փրկեա՛ գիս, տէ՛ր, եւ յարենէ ապրեցո եւ ողորմեա՛:

(Հայ դասական քնարերգություն, հ. 1, Երեւան, 1986, էջ 139-140)



Խորհուրդ մեծ եւ սքանչելի, Որ յայսմ աւուր յայտնեցաւ, Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝ Տան աւետիս աշխարհի:

Ծընաւ նոր արքայ Ի Բեթղեէմ քաղաքի, Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք, Չի վասըն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի Ի խանձարուրս պատեցաւ, Ո՛չ մեկնելով ի հօրէ՛ Ի սուրբ այրին բազմեցաւ:

\*\*\*  
Սիւն լուսոյ եւ ամպիովանի, սուրբ կոյս, Որ ցօղեցեր ի մեզ զցօղն երկնային, Ձքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

Անկէզ մորենի եւ սերովբէ՝ հողողէն, սուրբ կոյս, Քանգի պտուղն կենաց ի քէն տուաւ մեզ, Ձքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

Անիծիչ լուծիչ եւ քաւիչ մեղաց, սուրբ կոյս, Որ զանտանելին էից ի գիրկս քո բարձեր Ձքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

(Հայ դասական քնարերգություն, հ. 1, Երեւան, 1986, էջ 145)

## Վարդան Մամիկոնյանի խոսքը Ավարայրի ճակատամարտից առաջ (հատված ԵՂԻՇԵԻ «Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին» երկից)



Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն եւ ասէ.  
«Ի բազում պատերազմունս մտեալ է ին, եւ ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, եւ է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. եւ բազում այն է՝ որ յաղթող գտեալ ենք եւ ոչ յաղթեալք: Եւ միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչեաք: Որ փախչէր, վատանուն յաշխարհի երեւեր, եւ անողորմ մահ ի սմանէ գտանէր, իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, եւ պարգեւս մեծամեծս յանցաւոր եւ ի մահկանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք իսկ աւասիկ յիրաքանչիւր մարմինս ունիմք վերս եւ սպիս բազումս. եւ բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ եւ պարգեւս մեծամեծս: Անարգ եւ անօգուտ զքաջութիւնսն համարիմ, եւ առ ոչինչ զպարգեւսն բազումս. վասն զի ամենքեան խափանելոց են:  
«Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատարեալք, որչափ եւս առաւել վասն անմահ Թագաւորին մերոյ, որ Տէրն է կենդանեաց եւ մեռելոց, եւ դատելոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց: Ապաքէն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց ենք ի մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանիցենք ի սմանէ:  
«Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ միզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց: Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, եւ մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զփրկունս դարձուցուք, զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձերք մեր, սատակեսցուք զգօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան. եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդրութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք»:



(Եղիշե, «Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին», թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ե.Տեր-Մինասյանի, Երեւան, 1989, էջ 202-206)

# Ի մ ա ն ա լ զ ք ա ն ս հ ա ն ճ ա ր ոյ

## Իմաստասիրության վեց սահմանումները՝ ըստ ԴԱՎԻԹ ԱՆՅԱՂԹԻ

(հատված «Սահմանք իմաստասիրության» աշխատությունից)



Արդ ուսեալք ի ձեռն բաժանման, եթէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն, եթէ տեսական է և գործական: Այլ ի ձեռն սահմանացն ծանեալք, թէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն. քանզի ի ձեռն սահմանացն, որ յենթակայէն են՝ այս ինքն ի ձեռն այնր որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որում էակք են, և իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց իրողութեանց՝ ուսաք, եթէ տեսական է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ յառաւելութենէ, որ ասէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց՝ ուսաք, եթէ իշխանական է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հուպ կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է խոկունմ մահու՝ ուսաք, եթէ մաքրող ախտից է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հեռի կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է սմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան՝ ուսաք, թէ քաղաքական է իմաստասիրութիւն. քանզի քաղաքական իմաստասէր կամի և ըստ գիտութեան և ըստ գործոց որչափ կարողութիւն է մարդոյն սմանիլ աստուծոյ:

Եւ պարտ է փութապէս ասել, երկուց տեսակց ելոց իմաստասիրութեան տեսականին և գործականին, և վեց սահմանաց, ոմանք ի տեսականն իմաստասիրութիւն վերաբերին և ոմանք ի գործականն և ոմանք յերկարանչիրսն: Քանզի երկու սահմանք՝ որ յենթակայէ, որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որում էակք են, որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն ընդ իրողութեանց. և մի՛ որ յառաւելութենէ, որ ասէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց, ի տեսական մասն իմաստասիրութեան վերաբերի: Իսկ մին՝ որ ի հուպ կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է խոկունմ մահու, և միւսն ևս՝ որ ի ստուգաբանութենէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն և սիրելութիւն իմաստութեան, ի գործական մասն վերաբերին: Իսկ որ ի հեռի կատարմանէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն է սմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան, առ երկուսեան վերաբերի:


(Դավիթ Անյաղթ, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», համահավաք քննական քննադրերը եւ առաջաբանը Սեն Արեւշատյանի, Երեւան, 1980, էջ 103)

## ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՅԱԼՈՒՒՄ տաղը՝ ըստ Հայոց այբուբենի

Առաւօտ լուսոյ,  
Արեգակն արդար,  
Առ իս լոյս ծագեալ:  
Բոխտունն ի հօրէ,  
Բոխտեա՛ ի հօգուոյս  
Բան քեզ ի հաճոյս:  
Գանձո՞ղ ողորմութեան  
Գանձի՞ղ ծածկելոյ  
Գտո՞ղ զիս արա:  
Դուռն ողորմութեան  
Դաւանողիս բաց,  
Դասեցո՞ վերնոցն:  
Երբեակ միութիւն,  
Եղելոց խնամող,  
Եւ ինձ ողորմեա:  
Զարթի՛ր, տէ՛ր, յօգնել,  
Զարթո՞ գթմբեալս,  
Զուարթնոց սմանիլ:  
Է՞ղ հայր անսկիզբն,  
Էակից որդի,  
Է՛ միշտ սուրբ հոգի:  
Ընկա՛լ զիս գթած,  
Ընկա՛լ, ողորմած,  
Ընկա՛լ, մարդասէր:  
Թագաւոր փառաց,

Թողութեանց տուող,  
Թո՞ղ ինձ գյանցանս:  
Ժողովո՞ղ բարեաց,  
Ժողովեա՛ եւ զիս  
Ժողովս անդրանկաց:  
Ի քէն, տէ՛ր, հայցեմ,  
Ի մարդասիրե՞ղ  
Ինձ բժշկութիւն:  
Լե՛ր կեանք մեռելոյս՝  
Լո՛յս՝ խաւարելոյս,  
Լուծանո՞ղ ցաւոյս:  
Խորհրդոց գիտող,  
Խաւարիս շնորհեա,  
Խորհու՛րդ լուսաւոր:  
Ծնունդ հօր ծոցոյ,  
Ծածկելոյս ստուերաւ,  
Ծագեա՛ զլոյս փառաց:  
Կենարար փրկիչ,  
Կեցո՞ զմեռեալս,  
Կանգնեա՛ զգլորեալս:  
Հաստեա՛ հաւատով.  
Հաստատեա՛ յուսով,  
Հիմնեցո՞ սիրով:  
Զայնիս աղաչեմ,  
Զեռօքս պաղատիմ,

Զիր բարեաց շնորհեա՛:  
Ղանբարամբ լուսոյ,  
Ղեկավար ճարտար,  
Ղօղեալս ամրացո՛:  
Ճառագայթ փառաց,  
Ճանապարհ ինձ ցոյց,  
Ճեպել ի յերկինս:  
Միածինըղ հօր,  
Մո՛յծ զիս յառագաստ  
Մաքուր հարսանեաց:  
Յորժամ գաս փառօք,  
Յահագին աւուրն,  
Յիշեա՛ զիս, Քրիստոս:  
Նորոգող հնութեանց,  
Նորոգեա եւ զիս:  
Նորոգ գարդարեա՛:  
Շնորհատու բարեաց,  
Շնորհեա՛ զբաւութիւն,  
Շնորհեա՛ զթողութիւն:  
Ուրախացո՞, տէր,  
Ուրոյս փրկութեամբ,  
Ոյր վասն եմ ի սուգ:  
Չար մշակողին,  
Չար սերմանց նորին  
Չորացո՞ գպտուղն:  
Պարգելիչ բարեաց,  
Պարգեւեա՛ ինոց  
Պարտեացս



Սիրտ իմ քարեղէն:  
Վասըն գթութեանդ,  
Վասըն ողորմութեանդ,  
Վերադարձի՛ն կեցո՛:  
Տենչալոյո՞ղ տեսլեամբ,  
Տու՛ր ինձ յագեմալ,  
Տէր Յիսուս Քրիստոս:  
Րաբունդ երկնաւոր,  
Րոտեա՛ զաշակերտս  
Րամից երկնայնոց:  
Յող արեան քո, տէր,  
Յօղեա՛ ի հոգիս,  
Յնծասցէ անձն ին:  
Իլիծեալըս մեղօք,  
Իլիծեալ՝ աղաչեմ,  
Իլիսեա յիս բարիս:  
Փրկի՛չ բուրից,  
Փութա զիս փրկել  
Փորձութեանց մեղաց:  
Քաւիչ յանցանաց,  
Քաւեա՛ զօրհնաբանս,  
Քեզ երգել զփառս:




(Հայ դասական քնարերգութիւն, հ. 1, Երեւան, 1986, էջ 224-226)

## ԲԱՆ Թ


### Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ (հատված ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «Մատյան ողբերգության» պոեմից)

Ա  
Եւ արդ, զի՞նչ  
արժանաւոր ըստ քեզ  
բամբասանս  
չարագրեցից  
Ի կտակ մաղթանաց  
մատենի այսր  
ողբերգութեան,  
Ո՛վ անձն իմ թշուառ,  
ամենապատկառ  
Եւ առ պատասխանիս  
բանից անբարբառ,  
Անպիտան Աստուծոյ և  
սրբոցն  
մասնակցութեան:  
Զի եթէ զլի՞ծ մի ծովուց  
ի յորակութիւն դեղոյ  
յեղելեցից,  
Եւ զդաշտս սպարիսօք  
բազմօք սահմանեալ՝  
Ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից,  
Եւ զպուրակս յօգունց անտառաց շամբից եղեգանց  
Ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից,  
Եւ ո՛չ զթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց  
Զօրեցից ընդ գրով սահմանի գրաւել:  
Նա զի եթէ զմայրս Լիբանանու ի մեծ լուծ կշռոց զօղեցից,  
Եւ կամ զլեռն Արարատեան  
Ի կէտ ամբարձման նժարի միոյ  
Արդարութեան միջնորդ կացուցից,  
Ո՛չ հաւասարէ այնր հարթութեան համազուգակցել:



Բ  
Ծառս ամբարձուղէ, ստուարաստեղն,  
Տերևալից՝ ունայն ի պտղոց,  
Նմանակից յաւետ հարագատ այնր թգնուոյ,  
Զոր Տէրն զաւսացոյց:  
Քանզի սաղարթօք վարսից,  
Այս է՝ արտաքին դիմօք բարեշուք կերպից,  
Իբր պսակաւ իմիք պաճուճեալ,  
Բացականացն զոս բաղձալի,  
Իսկ եթէ մերձեսցի տնկողն խուզել զխնդրելին,  
Գտցէ զքեզ ունայն ի բարեաց  
Եւ գարշելի ի գեղեցկութեանց՝  
Ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց:  
Զի եթէ ապաժաման յանգգոյշ ժամուն  
Հերապանձ տունկն պտղակորոյս, անկենդան,  
Որ դոյզն պատկեր է անպատրաստից,  
Եկն ընդ անիծիք,  
Եւ կամ երկիր, ոռոգեալ ցօղով,  
Եւ ոչ բազմապատիկ զաւանդս արգասեաց  
Երկրագործութեան տածողացն մատուցանէ՝  
Լքեալ մոռանի,-  
Իսկ դու, ո՛վ անձն իմ եղկելի,  
Սահման բանաւոր և տունկ կենդանի,  
Եւ ոչ ի ժամու իւրում պտղաւոր,  
Ի՞բր ոչ գնոյն կրեսցես պատիժ նախնուն առակիոյ:  
Վասն զի զհամայնն ընկալար ի քեզ անպակաս  
յառաւելութեանց,  
Սկզբնաւորեալ ի մարդն առաջին  
Եւ մինչև ի սպառումն ծննդոց նորին,  
Զբերս գործոց նանրութեանց և զգիւտս նորոգս՝  
Ատելիս և անախորժելիս հաստողին զքեզ՝ աստուծոյ:

(«Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատեան ողբերգութեան», Երեւան, «Մուղնի», 2003, էջ 58-59)



### Հայտարարություն

ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1569-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 4-րդ կետի համաձայն **Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի** լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը.
- 2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.

- 5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակներին հետ:

Փաստաթղթերը ընդունվում են **2021 թվականի հոկտեմբերի 13-ից մինչեւ նոյեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9.00-ից մինչեւ ժամը 17.00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 13.00-ին**, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում, հասցեն՝ ք. Վանաձոր Զերացի 11:

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 4-38-26 հեռախոսահամարով: Էլեկտրոնային հասցեն՝ loriregcollege@gmail.com:

### Հայտարարություն

«Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը.
- 2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

- 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

- 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
- 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը՝ թղթային կա էլեկտրոնային տարբերակներով.

- 5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակներին հետ:

Փաստաթղթերը ընդունվում են **2021 թվականի հոկտեմբերի 14-ից մինչեւ նոյեմբերի 3-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչեւ 15.00-ը, բացի (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի նոյեմբերի 12-ին՝ ժամը 15.00-ին** Չարենցավանի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Չարենցավան, Խորենացի 1:

Տեղեկությունների համար զանգահարել (0226) 4-32-82 հեռախոսահամարով: Էլեկտրոնային հասցեն՝ qoleg1964@mail.ru:

### Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՍ «Երեւանի N1 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Ռուսաց լեզու» (26 ժամ), «Հայոց լեզու եւ գրականություն» (9 ժամ), «Հայոց պատմություն» (17 ժամ) առարկաների մանկավարժների թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՍ մշակված հարցաշարի: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքուկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքուկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերը ընդունվում են **մինչեւ հոկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին**, Երեւանի N 1 արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 65:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 44-37-01, 055 32-46 76 հեռախոսահամարներով:

### Հայտարարություն

«Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար:

- 1. «Իրավունքի հիմունքներ» առարկայի դասախոս:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձի առկայություն:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 22-ին՝ ժամը՝ 14.00-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

- 2. «Ճանապարհային երթուղույան անվտանգության կանոններ» առարկայի դասախոս:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 22-ին՝ ժամը՝ 10.00-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

- 3. «Գրիմ» առարկայի դասախոս:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում, կամ տվյալ մասնագիտական զբաղման վաղաժամկետում աշխատանքային գործունեության փորձ՝ եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի իրականացվում:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 22-ին՝ ժամը՝ 17.30-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

- 4. «Երգեցողություն» մասնագության «Մասնագիտություն կատարողական պրակտիկա» առարկայի նվազակցող:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձի առկայություն:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 25-ին՝ ժամը՝ 14.30-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

- 5. «Երգեցողություն» մասնագության «Մասնագիտություն կատարողական պրակտիկա» առարկայի դասախոս:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձի առկայություն:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 25-ին՝ ժամը՝ 10.30-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

- 6. «Իտալերեն լեզու» առարկայի դասախոս:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 25-ին՝ ժամը՝ 17.30-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

- 7. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասախոս:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքի փորձի առկայություն:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը՝ 10.30-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

- 8. «Արտասահմանյան երաժշտության գրականություն» առարկայի դասախոս:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը՝ 14.00-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

- 9. «Գործիքային կատարողական արվեստ» մասնագիտության (հարվաքաժու) առարկայի դասախոս:

Մանկավարժի թափուր տեղի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները:

Հասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքի փորձի առկայություն:

Մրցույթը տեղի կունենա **2021թ. հոկտեմբերի 27-ին՝ ժամը՝ 17.00-ին**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում:

Փաստաթղթերը ընդունվում են **2021թ. հոկտեմբերի 8-ից մինչեւ 2021թ. հոկտեմբերի 21-ը ներառյալ**, Երեւանի մշակույթի եւ արվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Բագրատունյաց 37:

### Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (68 դասաժամ), անգլերենի (468 դասաժամ) եւ աշխարհագրության (34 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1. Դիմում,
- 2. Կրթության մասին հաշվետու փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),
- 3. Անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),
- 4. Աշխատանքի ստաժի վերաբերյալ տեղեկանք ( առկայության դեպքում),
- 5. Ինքնակենսագրություն,
- 6. Մեկ լուսանկար 3x 4 չափի,
- 7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի

ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիներին,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքուկ: (բնօրինակը եւ պատճենը),

9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր: (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են **մինչեւ 2021թ. հոկտեմբերի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի հոկտեմբերի 28-ին՝ ժամը 14:30-ին**, Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարանում, հասցեն՝ ք. Քաջարան, Խանջյան 5:

Տեղեկությունների համար զանգահարել (077) 52-32-90 հեռախոսահամարով:











